ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՇԱԲԱԹ 2018

Միջոցառումների ժամանակացույց

15-19 Հոկտեմբեր
2018 Երևան
Հայաստանի Ազգային
Պոլիտեխնիկական Համալսարան

Համարո՞ւմ ես, որ հանդիսանում ես տեխնոլոգիական բացառիկ գաղափարի կրող: Ունե՞ս թիմ, Startup նախագիծ և ցանկանո՞ւմ ես այն դարձնել իրականություն: Կամ պարզապես ցանկանո՞ւմ ես սովորել ոլորտի փորձառու մասնագետներից և լսել խորհուրդներ, տեղյակ լինել ոլորտում տեղի ունեցող իրադարձություններից և գործող առաջատար կազմակերպություններից:

Ուրեմն ՀԱՊՀ Ուսանողական խորհրդի և Հայաստանի Ազգային ճարտարագիտական լաբորատորիաների կողմից կազմակերպվող «Տեխնոշաբաթ» միջոցառումը հենց քեզ համար է:

Հայաստանի ազգայի պոլիտեխնիկական համալսարանի 85 ամյակին նվիրված ծրագրի շրջանակներում հոկտեմբերի 15-19-ը Պոլիտեխնիկում նախատեսվում է իրականացնել միջոցառումների մի ամբողջ շարք, որտեղ դու կգտնես այն ինչ ավելի կհետաքրքրի քեզ:

«Տեխնոշաբաթ»-ի ընթացում դու հնարավորություն կունենաս «Բաց դռների օր» միջոցառման շրջանակներում այցելել և ծանոթանալ համալսարանում առկա ենթակառուցվածքներին, մասնակցել ինժեներական նախագծերի ցուցահանդեսին, դառնալ Նորարարական գաղափարների մրցույթի մասնակից և առաջարկել քո ինովացիոն գաղափարը:

Այս ամենը կուղեկցվի վարպետաց դասերով, սեմինարներով, հետաքրքիր հանդիպում քննարկումներով: Ձեռներեցության օրվա շրջանակներում դու հնարավորություն կունենաս հանդիպել ոլորտի առաջատար ընկերությունների ներկայացուցիրների, ընկերությունների հիմնադիր տնօրենների և այլոց հետ, տալ և ստանալ քեզ հետաքրքրող հարցերի պատասխանը:

«Տեխնոշաբաթ»-ին մասնակցելու համար ծանոթացիր միջոցառումների անցկացման ժամանակացույցին, գրանցվիր «Բաց դռների օր» միջոցառմանը, ձևավորիր քո թիմը՝ կազմված 2-5 անդամից և ներկայացրու դիմում-հայտ մասնակցելու համար Նորարարական գաղափարների մրցույթին: Ստացիր հնարավորություն աշխատելու քո թիմի հետ, ստանալու մասնագետների խորհրդատվությունը, զարգացնելու քո ինովացիոն գաղափարը և ներկայացնելու այն փորձառու ժյուրիին:

Դարձիր լավագույն թիմերից մեկը և արժանացիր մրցանակի և որ ամենակարևորն է լսելի դարձրու քո գաղափարը հանրությանը և պոտենցիալ ներդրողին:

Նորարարական գաղափարների մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետը հոկտեմբերի 15-ն է: Շտապիր գրանցվել և տեղեկացրու ընկերոջդ:

Շտապիր դառնալ ամենատեխնոլոգիական ԲՈՒՀ-ի ամենատեխնոլոգիական շաբաթի մասնակից:

Տեխնոլոգիական շաբաթ
ՀԱՊՀ, 15-19 Հոկտեմբեր

15.10.18, Երկուշաբթի

14:00-17:00	**Բաց դռների օր**	
14:00-15:00	Այցելություններ ՀԱՃԼ,	
15:00-16:00	Անօդաչու թռչող սարքերի լաբորատորիաներ,	
16:00-17:00	Գերազանցության կենտրոն	

16.10.18, Երեքշաբթի

12:30-15:00	**Ինժեներական նախագծերի ցուցահանդես**	ՀԱՊՀ 3-րդ մասնաշենքին և ՀԱՃԼ -ին հարող տարածք

17.10.18, Չորեքշաբթի

15:00-15:30	**Ինովացիոն գաղափարների մրցույթի բացման արարողություն**	Տերյան 105, 2-րդ մասնաշենք, 2-րդ հարկի նախասրահ
15:30-16:15	**Սեմինար 1**	
16:15-17:00	**Սեմինար 2**	
17:00-17:15	**Հանգիստ**	
17:15-18:00	**Սեմինար 3**	
18:00-18:45	**Սեմինար 4**	
18:45-21:00	**Թիմային աշխատանք**	

18.10.18, Հինգշաբթի

15:00-17:00	**Ձեռներեցության օր, Հաջողության պատմություններ**	Տերյան 105, 2-րդ մասնաշենք, 2-րդ հարկի նախասրահ
17:00-21:00	**Թիմային աշխատանք**	

19.10.18, Ուրբաթ

15:00-17:00	**Նախագծերի ներկայացում**	Տերյան 105, 2-րդ մասնաշենք, 2-րդ հարկի նախասրահ
17:00-17:30	**Գնահատում ժյուրիի կողմից**	
17:30-18:00	**Մրցանակների հանձման արարողություն**	
18:00-18:30	**Փակում**	